

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

24 մարտ 2018

5-րդ դասարան, տևողությունը՝ 120ր


Աշակերտի անուն, ազգանուն՝ _____

Դպրոց՝ _____

1. Օգտագործելով միայն 20 և 50 դրամանոցներ քանի՞ եղանակով է հնարավոր վճարել 3280 դրամ:


Պատասխան՝

2. Հայտնի է, որ ABCD ուղղանկյան կեսը գտնվում է EFGH քառակուսու ներսում, իսկ EFGH քառակուսու $\frac{1}{5}$ -րդ մասն է գտնվում ABCD ուղղանկյան ներսում: Պարզել, թե ABCD ուղղանկյան երկարությունը լայնությունից քանի՞ անգամ է մեծ:



Պատասխան՝

3. Նշված պատկերում բոլոր կողմերը հորիզոնական են, կամ ուղղահիգ: Գտնել X-ով նշված կողմի երկարությունը:



Պատասխան՝

4. Ֆիզկուլտուրայի դահլիճում կան բասկետբոլի, վոլեյբոլի և ֆուտբոլի գնդակներ: Հայտնի է, որ բացի 14 հատից մնացած բոլոր գնդակները ֆուտբոլի գնդակներ են, բացի 17 հատից մնացած բոլորը վոլեյբոլի գնդակներ են և բացի 19 հատից մնացած բոլորը բասկետբոլի գնդակներ են: Քանի՞ գնդակ կա ֆիզկուլտուրայի դահլիճում:

Պատասխան՝

Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

24 մարտ 2018

5-րդ դասարան, տևողությունը՝ 120ր

5. Խաչիկը, Վաչիկն ու Հրաչիկն ունեն որոշակի քանակությամբ խնձորներ: Հայտնի է, որ Վաչիկն ունի Խաչիկի խնձորների քանակության կեսից 6 հատով ավել խնձոր, իսկ Հրաչիկն ունի Վաչիկի խնձորների քանակության յոթապատիկից 11 հատով պակաս խնձոր: Գտնել թե քանի՞ խնձոր ունեն բոլորով միասին, եթե հայտնի է, որ Հրաչիկն ունի Վաչիկի խնձորների քանակության հնգապատիկից 38 հատով պակաս խնձոր:

Պատասխան՝

6. Քանի՞ եղանակով է հնարավոր հետևյալ աղյուսակում կարդալ Արշակ բառը, եթե ամեն տառ կարդալուց հետո թույլատրվում է կարդալ միայն նրա հետ ընդհանուր կողմ ունեցող վանդակի տառ:

Կ	Ա	Շ	Ա	Կ
Ա	Շ	Ր	Շ	Ա
Շ	Ր	Ա	Ր	Շ
Ա	Շ	Ր	Շ	Ա
Կ	Ա	Շ	Ա	Կ

Պատասխան՝

7. Դպրոցի շախմատի թիմը բաղկացած է 2 տղաներից և 3 աղջիկներից: Լուսանկարիչը աշակերտներին հանձնարարում է նստել մի շարքով այնպես, որ երկու ծայրերում նստած լինեն տղաները, իսկ նրանց միջև լինեն աղջիկները: Քանի՞ եղանակով են կարող երեխաները նստել, որպեսզի բավարարեն լուսանկարչի հանձնարարությունը:

Պատասխան՝

8. Քանի՞ ուղղանկյուն է պատկերված նկարում:

Պատասխան՝

